ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5366-Ա « 03 » նոյեմբերի 2026թ.

ՎԻՈԼԵՏՏԱ ԱՄԻՐՋԱՆԻ ԲԵՋԱՆՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՀԵՆՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.199 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 130-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Վիոլետտա Բեջանյանի հետ 2021 թվականի նոյեմբերի 2-ին կնքված աշխատանքային պայմանագրի 4-րդ գլխի 4.1-ին կետի «ա» ենթակետը և 5-րդ գլխի 5.1-ին կետը՝

1. Վիոլետտա Ամիրջանի Բեջանյանին՝ 2026 թվականի նոյեմբերի 3-ից ազատել «Երևանի Հենրիկ Խաչատրյանի անվան հ.199 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2021 թվականի նոյեմբերի 2-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Երևանի Հենրիկ Խաչատրյանի անվան հ.199 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության տնօրենի տեղակալ Լաուրա Տեփոյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ